Տ. ՆԵՐՍԵՍ ՔՀՆ. ՆԵՐՍԵՍՅԱՆ

ՔԱՐՈԶ

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, ամէն»:

Իջին անձրեւք և խաղացին գետք, շնչեցին հողմք և բախեցին զտունն և ոչ կործուանեցաւ, քանզի ի վերայ վիմի հաստատեալ էր» (Մատթ. Է 25):

«Իջան անձրևները, հորդեցին գետերը, փչեց ուժեղ քամին, հարվածեց տանը, բայց տունը չքանդվեց, որովհետև հիմքը ամուր էր»:

Սիրելի եղբայրներ և քույրեր,

Համաձայն Հայաստանյայց Եկեղեցվո սուրբ հայրապետների կարգադրության, Զատկին հաջորդող կիրակիները մեզ ներկայացնում են քրիստոնեական Եկեղեցվո ստեղծման, հաստատման և զարգացման պատմությունը: Այդ կիրակիները մենք ընդհանրապես կոչում ենք գունագեղ կիրակիներ, որովհետև յուրաքանչյուր կիրակի մենք տալիս ենք մի գույնի անուն. սպիտակ, կանաչ և կարմիր: Սպիտակը խորհրդանշում է Եկեղեցվո հաստատումը. Քրիստոսի Հարությամբ ստեղծվեց և հաստատվեց Եկեղեցին: Առանց Քրիստոսի Հարության քրիստոնեական Եկեղեցի չէր կարող գոյանալ, չէր կարող ստեղծվել: Կանաչ կիրակին խորհրդանշում է նոր Եկեղեցվո վերանորոգումը, վերազարթոնքը: Իսկ կարմիր կիրակին արդեն խորհրդանշում է զինվորյալ, մարտական կիրակին: Եկեղեցին, որպես հաստատուն համայնք, որպես ամուր հիմքերի վրա դրված մի կառույց, հրահանգում է և պահանջում է, որ իր հավատացյալները միայն կրավորական դիրք չունենան, այլ պայքարեն իրենց հավատքը, իրենց Եկեղեցին, իրենց համայնքը պահելու համար: Ողջ կյանքը մի պայքար է: Պայքար ոչ միայն ի խնդիր ամենօրյա հացի, այլ նաև պայքար ընկերային մրցակցությունների մեջ մեր դիրքը, տեղը, մեր հավասարակշռությունը պահելու: Նույնն է իրողությունը նաև քրիստոնեական կյանքի համար: Մեզնից յուրաքանչյուրը այն դրպեին, որ վերածնվում է քրիստոնյա եկեղեցվո ավազանի մեջ մկրտությամբ, այդ մկրտության խորհուրդի միջոցով և շնորհով նրան տրվում է ուժը, զորությունը և կարողությունը «զամենայն նետս մուխս չարին շիջուցանել»: Այսինքն, ուժը և կարողությունը՝ պայքարել այն բոլոր ապականիչ չար ուժերի դեմ, որոնք սպառնում են, խանգարում են, տկարացնում են մարդու հոգևոր կյանքը: Հոգևոր կյանքը ձեռք բերելու և պահելու համար՝ բաղձանքը միայն բավական չէ, պետք է պայքարել այդ հավատքը պահելու համար: Մեր Եկեղեցին ստեղծվելուց և ամուր հիմքերի վրա դրվելուց հետո, հազիվ 150 տարի անցած՝ մենք պատերազմի իջանք մի հզոր կայսրության դեմ 451 թվականին՝ մեր հավատքը պահելու համար: Եվ մենք իրավունքը ունենք ասելու, Պողոս առաքյալի պես՝ «զբարւոք պատերազմն պատերազմեցայ»: Բոլոր ազգերն էլ իրենց պատմության ընթացքում պատերազմներ են մղում: Սակայն երանի այն ժողովուրդներին, որոնք պատերազմը բարի նպատակի համար են մղում, որոնց պատերազմներ մղելու պատճառը ուղիղ ճանապարհի վրա մնալու համար է՝ մնալ հավատավոր իրենց ավանդություններին: Սա մեր անցյալի պատկերն է:

Ինչ պետք է լինի պատկերը այսօրվա, քանի որ այն պայքարը, որ մենք սկսեցինք 451 թ., շարունակվում է նաև այսօր տարբեր ճանապարհներով, տարբեր պատճառներից դրդված: Եվ անհրաժեշտ է, որ մենք մեր հավատքի վրա ամուր մնանք: Ինչպե՞ս պետք է ամուր մնանք, ինչի՞. վրա պետք է հիմնենք մեր պայքարը՝ ուժի և կարողության սպառումը: Դարերի խորքից գալիս է մեզ մի պատգամ, որը, ամփոփ կերպով ասած, կոչվում է պահպանողականություն. պահել այն, ինչ որ ավանդել են մեր հայրերը: Պողոս առաքյալ ասում է՝ «Ես ձեզ ավանդում եմ այն, ինչ որ ես

ստացա»: Հետևաբար սիրելի եղբայրներ և քույրեր, մենք պարտավոր ենք մեզ թողնված ավանդությունը ոչ միայն պահել, այլ նաև փոխանցել մեր հաջորդներին: Պահպանողականության մեջ է, որ պիտի կարողանանք տերը մնալ մեր ազատության: Այն ազատության, որ հիմնապայմանն է ժողովուրդների ինքնության և բարոյական զարգացումի: Պահել, ինչ որ ստացել ենք մեր նախնիներից: Այդ պետք է լինի նշանաբանը մեր պայքարի: Եթե մեզնից ավելի մեծ ազգեր և մեծ ժողովուրդներ դեռ այսօր ամեն ճիգ թափում են հսկելու իրենց ժողովուրդների անխառնության վրա, հսկելու իրենց ժողովուրդների ինքնությունը հատկանշող, ինքնությունը պահող տարրերի վրա, ապա ինչքա՞ն առավել մեզ վրա: Մեր ուսերի վրա ծանրանում է նախանձախնդրության պարտականությունը՝ ավելի ուժ տալու մեր ներքին կյանքի ամրության: Ամեն ճիգ և ամեն կարողություն տրամադրել ամրացնելու մեր հոգևոր կյանքը, մեր հավատքը, որովհետև այդ հավատքի վրա է հիմնված մեր տունը: Ոչ մի կասկած, որ մենք որպես ժողովուրդ մեր հազարամյա պատմության ընթացքին կորցրել ենք բազմաթիվ հոգևոր ժառանգություններ, կորցրել ենք բազմաթիվ նյութական՝ ձեռք բերված առավելություններ: Մենք դրա ականատեսն ենք: Սակայն չենք կորցրել մեկ բան. այն մեծագույն ճշմարտությունը, որ ողջ է մեր հոգին, որը աղբյուրն է մեր բոլոր մյուս նվաճումների, ողջ ենք ազգովին, որովհետև ունենք այն էական տարրերը, որոնցով ստեղծվում է ժողովուրդի կենդանությունը, ժողովուրդի ստեղծագործելու կարողությունը: Նախ և առաջ մեր հավատքը, մեր Եկեղեցին, երկրորդ՝ այդ հավատքի և այդ Եկեղեցվո ջիղը հանդիսացող մեր լեզուն, մայրենի լեզուն: Եվ այս երկուսի գումարով ստեղծված մեր սքանչելի մշակույթը: Հավատ (Եկեղեցի), լեզու և մշակույթ: Հետևաբար, սիրելի եղբայրներ և քույրեր, ես երբ ասում եմ պահպանողականություն, ես նկատի ունեմ այս երեք երևույթները՝ հավատը, լեզուն և մշակույթը: Որպեսզի մեր ճիգը և մեր ուժը հասնի իր նպատակին, արդյունավորվի, և այդ արդյունքը հավերժանա, անհրաժեշտ է պահպանողական լինել: Մեր ազգային գոյությունը այս հիմքերի վրա է: Ազգեր կապրեն ազատության մեջ, կապրեն բռնատիրության մեջ, կապրեն ստրկության մեջ, սակայն միայն և միայն կդիմանա այն ժողովուրդը, որը ապրում է հոգևոր ազատության մեջ, ապրում է իր հոգին ազատ՝ հակառակ քաղաքական պայմանների: Դարեր և դարեր շարունակ այդպես ենք ապրել: Մենք որպես փոքր ժողովուրդ ապրել ենք աշխարհի մեծագույն ազգությունների հետ հարևան: Նրանց հետ կնքել ենք պայմանագրեր, նրանց հետ դասավորել ենք մեր առօրյա կյանքը, երբեմն որպես նրանց ենթակա մարմին, սակայն գերազանցել ենք նրանց, որովհետև ուժը տվել ենք հոգևորին, ոգեկանին, հավատին: Զկորցնենք մեր հոգեկան ազատությունը, որի տերը մնացինք մենք միշտ մեր լեզվով, որի տերը մնացինք միշտ մեր մշակույթով: Այս տաճարը, որ դուք տեսնում եք, երևելի և շուշափելի վկայագիրն է իմ ասածի, որովհետև այստեղ դուք ամեն կիրակի բախտավորությունը ունեք գալու և աղոթելու: Հին Կտակարանի մեջ մի այսպիսի դրվագ կա. Մովսես մարգարեն բարձրանում է Սինա լեռը: Սինա լեռը հրեա ժողովրդի սրբազան վայրերից մեկն է: Եվ հանկարծ երկինքը բացվում է և հրեշտակի մի ձայն Մովսեսին ասում է. «Մովսես, կոշիկներդ հանիր, որովհետև այնտեղ, որտեղ կանգնած ես, սուրբ է»: Սուրբ է նաև այս վայրը: Եվ ինչքան բախտավոր եք դուք, որ ձեր նախնիները կարողացել են այս շենքը պահել և փոխանցել ձեզ, իսկ դուք էլ պարտականություն ունեք փոխանցելու ձեր հաջորդներին: Ամեն մի հայի համար չկա ավելի բնական, ավելի սովորական, ավելի հարազատ պարտականություն, քան գալ Մայր Աթոռ Ս. Էջմիածին և կապի մեջ մտնել ոչ միայն մեր Փրկչի Հիսուսի Քրիստոսի հետ, այլ նաև մեր ավանդությունների և մեր հայրերի հետ:

Սիրելի եղբայրներ և քույրեր, այս դրժվար օրերին եկեք բոլորս միասին ուխտենք այս սուրբ տաճարի մեջ, որ կշարունակենք նույն պայքարը, կպահենք մեր ուղիղ ընթացքը և կպահենք մեր հավատքը: Եվ ինչպես պատարագիչն է ասում՝ «Որ օրհնես զայնոսիկ, որք օրհնեն զքեզ Տէր և սուրբ առնես զյուսացեալս ի քեզ»: Այսինքն, Տեր, օրհնիր նրանց, ովքեր քեզ են օրհնում և սրբացրու նրանց, որոնք իրենց հույսը քեզ վրա են դնում: Աղոթենք, որ բարձրյալն Ատված մեզ տա այդ ուժը, այդ կարողությունը, ամուր մնանք մեր հավատքի վրա, հավատարիմ մնանք մեր ազգային ավանդություններին՝ ի փառս Հայաստանյայց Սուրբ Եկեղեցվո, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից, ամեն: